այդ կրկնում են, մինչև որ էլ միմեանց ձայնը չէ լսում։

Մէկ 10 տարեկան աղայ թուրքերէն ա՛յ եար, ա՛յ եարօ (սիրեկան, սիրեկան. այստեղ փողոցներում թուրքերէն կերգեն և 6 տարեկանից սկսած և նրան եթէ երգից ոչինչ չիմանայ, անշուշտ ա՛յ եար, ա՛յ եարօ գիտէ և մեքենայաբար կերգէ ու կերգէ) երգելով գնում է, իսկ միւսը՝ փողոցի հակառակ կողմից եկող նրան հասակակից տղան նրան ա՛յ չօռ, ա՛յ չօռօ է ասում։

—«Ի՞նչ ղալաթ ես անում», հարցնում է երգողը։

—«Ղալաթը դու ես անում, սախախի (յիմար) լակոտ, ասում է միւսը նրան մօտենալով։

—«Ղուռումսաղ, ռեխդ քեզ քաշես, խի ես ինձ ուչունց (յիշոց) տալիս։

—«Ղուրումսաղ էլ ես, սափիկ էլ ես, էշ էլ ես, քու... բայց ականջդ խփիր շուտ, որ չը լսես թէ ինչ ամենաստոր և ամենաամօթալի հայհոյանքներ են թափվում սրանց բերանից, եթէ կարող ես բաժանիր միմեանցից, որ իրար գլուխ չը պատռեն։

Ոչ լսես և ոչ տեսնես, երբ այս հայհոյողները թուրքերի տղաներից լինեն։ Ցասնուհինգ, քսան տարեկան և աւելի հասակաւորների կռիւները (մեծ մասամբ յիմար բաների համար) առանց մէկը միւսի քիթը, գլուխը չը ջարդելու, չարնոտելու չեն վերջանայ։ Միմեանց դաշոյներով վիրաւորել և սպանելն էլ շատ է պատահած։ Սրանց կռիւների մէջ էլ կին, հայր, մայր, մեռեալ, գերեզման, հաւատ, օրէնք էլ ոչինչ չէ մնում, որ չը հայհոյվի։ Քստմնելի և զզուելի տեսարաններ են ներկայացնում սրանց կռիւները. ներկայացնել պատկերներով սրանց կռիւները անկարելի է։

Իսկ ի՞նչ են անում սրանց ծնողները։ Նրանք ամեն տեսակ կեղտոտ միջոցներով կամենում են, որ սրանց համար հարստութիւն թողնեն, նրանք աշխատում են գուցէ և իրանք էլ չը գիտեն թէ ում համար և և ինչի համար։ Սրանց ուսումն առած փողը կորած է համարվում։

Ակամայ մտածում ես, երբ մի քաղաքի մէջ երիտասարդութեան քառասուն և ինը յիսուներորդական մասը փողոցային այս յիշոցներով է կրթվում իրանց ծնողների անփոյթութեամբ, այլ ևս ինչ կարելի է սպասել քաղաքի ապագայ նոր սերունդից։

Վա՜յ այն քաղաքին՝ որի մեծ ուսումնարանը փողոցն է։

Զ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, օգոստոսի 4-ին

Խրիմեան հայրիկի 'ի Վան հիւանդանոց շինելու խորհուրդը իմանալով ազգաշահ «Մշակ» օրագրի միջոցով, անտանելի եղաւ ինձ համար անտարբեր մնալ և ըստ կարեաց չափու օգնութեան ձեռք չը կառկառելը այն վսեմ գործունէութեանն Հայրիկի։ Եւ առ որ հանգանակելով ժողովեցի 212 րուբլի 50 կ.։ Պարոն խմբագիր, խնդրեմ ընդունէք գումարն 'ի տեղ հասուցանել, և նուիրատուաց անուններն 'ի տիպ մուծանել։

Զ. Հասան-Ջալալեանց 25 ր., Տիկին Մելիք-Ազարեանց 25 ր., Եղբ. Տէր-Օհանեանց 15 ր., Աննա Լմինեանց 10 ր., Անյայտ ոմն 5 ր., Ա. Արարատեանց 5 ր., Զ. Հասան-Ջալալեանց 2 ր., Տիկին Նրեսփոխեանց 1 ր., Ս. Խարազեանց 3 ր, Եղիսաբէթ Դէմուրեանց 3 ր., Հեղինէ Կուկուջանեանց 1 ր., Թամամշեանց 1 ր., Էրմոնիայ Աէրօբեանց 3 ր., Ղանաթել Թումեանց 5 ր., Գողթնեցի 1 ր., Ց. Ջլով. Ազամալեանց 1 ր., Վարվարիա Յարութիւնեանց 1 ր., Տիկին Տէր-Առաքելեանց 3 ր., Տիկին Նիկիտազարեանց 5 ր., Դարիկօ Օհանեանց 2 ր., Նինօ Մէքուռնութով 3 ր., Սալօմէ Մանդինեանց 2 ր., Վառվառէ Օհանեանց 1 ր., Ա. Սարուխանեաց 2 ր., Հանգուցեալ Սառայի համար Վանօ Ոսկետէֆանով 3 ր., Սօֆիօ Տէր-Սարգսեանց 2 ր., Ջարվարդ Խոկանդարով 2 ր., Յ. Պաուղեանց 1 ր., Ա. Սատաղեանց 2 ր., Վ. Թումանեանց 5 ր., Օլգայ Քէփինեանց 3 ր., Սօֆիայ Ալօյեանց 3 ր., Սօֆիայ Վարդանեանց 1 ր., Գոհար Աբիեանց 2 ր., Կեկէլ Միրաբեանց 5 ր., Սօֆիօ Գասպարեանց 3 ր., Օվսաննայ Արշակունեանց 2 ր., Աշխէն և Մարիամ Բէլլուբէկեանց 5 ր., Մակայ Ալելեանց 2 ր., Ա. Ղազարով 2 ր., Դ. Խանանաշվիլի (հրէայ) 1 ր., Ա. Լեվիզ (հրէայ) 1 ր., Ռ. Բէժինաշվիլի (հրէայ) 1 ր., Մ. Բէժինաշվիլի (հրէայ) 1 ր., Խ. Գաւրիթաշվիլի (հրէայ) 50 կ., Մի ոմն 1 ր., Վառվարի Գափինեանց 1 ր., Լիզայ Ղարիբեանց 2 ր., Լիզայ Մամիկոնեանց 2 ր., Պ. Մակարով 1 ր., Օվսան Տէր-Ստեփանեանց 1 ր., Սօֆիօ Միլեանց 1 ր., Կ. Տէր-Դաւիթեանց 3 ր., Կատարինէ Աւետիսեանց 2 ր., Լիզայ Պարուխեանց 1 ր., Օր. Լիզայ Մուսիեանց 2 ր., Ա. Խօջապարուխով 1 ր., Հ. Մինասեանց 1 ր., Աֆանեսով 1 ր., Մակայ Միրզոյեանց 1 ր., Շաշինկայ Մուրադով 3 ր., Ս. Կիրակոսով 1 ր., Ս. Դուլգարեանց 1 ր., Կատարինէ Բաբանասեանց 1 ր., Սանամ Խաչատուրեանց 3 ր., Մ. Միրաբեանց 5 ր., Մակայ (Մարիամ) Նիկողոսեանց 5 ր.։ Գումարն է 212 ր. 50 կ.։

Մակայ (Մարիամ) Նիկողոսեանց

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։

Անգլիական պարլամենտի նիստերը դեռ շուտ չեն փակվի։ «Times» լրագիրը յայտնեց, որ պարլամենտը շարունակ նիստեր կունենայ մինչև սեպտեմբերի 12, այնպէս որ պարլամենտի անդամները ստիպված կը լինեն դարձեալ մի ամիս աշխատել։

Գլադստոնի մինիստրութիւնը, խախտելով պարլամենտական հին սովորութիւնը, չը համաձայնեց յետաձգել այն օրինագծերի քննութիւնը, որոնք յիշված էին գահական ճառի մէջ այժմեան պարլամենտի բացվելու ժամանակ։ Երբ ընդդիմադրական կուսակցութեան անդամներից մէկը հարց առաջարկեց պարլամենտի փակվելու մասին, Գլադստոնին իր հիւանդութեան ժամանակ փոխարինող մարկիզ Հարտինգտոն ասաց, որ կառավարութիւնը դիտաւորութիւն չունի յետաձգել ոչ մէկը առաջարկված օրինագծերից։ Այդ պատասխանը պահպանողականները չը հաւանեցին։ Յայտնի է, որ երբ ազատամիտ կուսակցութիւնը ընդդիմադրում էր, նա անդադար մեղադրում էր Բիկոնսֆիլդի մինիստրութեանը, որ նա անդադար յետաձգում էր ամենաանհրաժեշտ վերանորոգական նախագծերի քննութիւնը։ Պահպանողականները յոյս ունէին, որ Գլադստոնի մինիստրութեանը պատահած դժուարութիւնների մի շարքը կը ստիպէր ազատամիտ մինիստրութեան հետևել իր նախորդի օրինակին և այդպիսով պահպանողականները առիթ կունենային պնդելու, որ ազատամիտները չեն կատարում իրանց խոստմունքները։ Այդ յոյսերը չը դարացան։ Կառավարութիւնը պարլամենտի նիստերը ուշացնում է սովորականից ամիս ու կէսով աւելի, որպէս զի իր առաջարկած օրինագծերը ամբողջապէս քննվեն։

Այս փաստը նոյնքան յաջողակ է, որքան և համաձայն մինիստրութեան արժանաւորութեան հետ։ Համայնքների ժողովի մէջ նշանաւոր մեծամասնութիւն ունենալով, Գլադստոն կարող է հաւատացած լինել, որ իր վճիռը նիստերի ուշացնելու մասին ընդդիմադրութիւն չի գտնի համայնքների ժողովի մէջ։ Մնացած ամսվայ ընթացքում անգլիական ազգային ժողովները միջոց կունենան վերջացնել այն բոլոր հարցերը, որոնցով երկիրը ամենից շատ հետաքրքրված է։ Եթէ լորդերի ժողովը կը մերժէ համայնքների ժողովից ընդունված կառավարչական օրինագծերից մի քանիսը, այդ հանգամանքը կապացուցանէ անգլիացիներին, որ լորդերի ժողովի մեծամասնութիւնը հետևաբար թշնամութեամբ է վերաբերվում կառավարութեանը։ Այսպիսի վկայութիւններից յետոյ, մինիստրութիւնը պարլամենտի փակված ժամանակ կարող է հեշտութեամբ կառավարել երկիրը, չը վախենալով կորցնել ժողովրդի աչքի առաջ իր հեղինակութիւնը։

Պարլամենտական նիստերը սեպտեմբերի կէսին վերջանալով, մինիստրութիւնը միջոց կունենայ ազատ գործել այնպիսի բոպէին, երբ այդ ազատութիւնը նրան ամենից շատ հարկաւոր է։ Սեպտեմբերի կէսին գեներալ Ռոբերտս արդէն Կանդահարի մօտ կը լինի և մինիստրութիւնը կիմանայ նրա գործողութիւնների հետևանքները, միևնոյն ժամանակ արևելեան գործերն էլ մինչև սեպտեմբեր վճռողական բնաւորութիւն կը ստանան։ Անգլիական մինիստրութիւնը միջոց կունենայ այդ երկու հարցերն էլ իր հայացքների և համոզմունքների համեմատ վճռել։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Լրագիրները հաղորդում են հետևեալ լուրերը։

Յունական զօրքերի կազմելու մասին ստացված վերջին տեղեկութիւններից երևում է, որ բաւական ժամանակ կանցնի մինչև յունական կառավարութիւնը կը կարողանայ զօրքերի այն քանակութիւնը պատրաստել, որ բաւական լինի Յունաստանին վիճակված նահանգները գրաւելու համար։ Յուլիսի վերջերին սկսվեցաւ պահեստի զօրքերի հաւաքելը և սպասում էին, որ մի 15 օրից յետոյ յունաց զօրքերի թիւը 20,000 կը հասնի։ Այդ թիւը կրկնապատկելու համար գոնէ վեց շաբաթ ժամանակ կը հարկաւորվի, այնպէս որ Թիւրքաց սահմանները անցնելու համար զօրքերի անհրաժեշտ եղած քանակութիւնը երկու ամսից առաջ պատրաստ չէ կարող լինել։

Սրանից երևում է, որ Արևելքում վճռողական գործողութիւնները սեպտեմբերի վերջին կը սկսվեն։ Մինչև այդ ժամանակը ամեն բան, գոնէ յունական հարցի վերաբերութեամբ, կը սահմանափակվի պատրաստութիւններով։ Այդ ժամանակամիջոցի ընթացքում պետութիւնները միջոց կունենան կատարեալ համաձայնութիւն կայացնել ծովային ցոյցի վերաբերութեամբ և ոչնչացնել այն անորոշ կէտերը, որոնց պատճառով մի քանի պետութիւնները ծովային ցոյցը անօգուտ են համարում։

Այդ երկրորդական հարցերը պետութիւնները ստիպված կը լինեն վճռել այն ժամանակամիջոցից առաջ, որ տուած է Բ. Դռանը Դուլցինիօն Չերնոգորիային յանձնելու համար։ Դուլցինիօն Չերնոգորիային յանձնելու ժամանակ եւրոպական նաւատորմը պէտք է մօտ լինի, որպէս զի հարկաւոր դէպքում կարողանայ օգնել Ռիզա-փաշային և մինչև անգամ ստիպէ նրան կատարել իր վրա դրած պարտականութիւնը։ Հասկանալի է, որ իրանց նաւատորմը Թիւրքաց ջրերը ուղարկելուց առաջ պետութիւնները պէտք է վճռեն, թէ այդ նաւերը ի՞նչ պէտք անեն։ Եթէ Դուլցինիօն առանց արգելքների Չերնոգորիային յանձնվի, նաւերը չեն վերադառնայ նախկին նաւահանգիստները, այլ կը մնան մինչև վերջանայ յունական գործը, ուրեմն նաւատորմի հրամանատարը պէտք է հրահանգներ ունենայ իր անելիքի մասին, եթէ Յունաստանի և Թիւրքիայի մէջ պատերազմ պատահի։

Պարզ է ուրեմն, որ դիպլոմատիական կողմից գործը երկու շաբաթվայ մէջ պէտք է վերջանայ և ինչպէս երևում է առանձին դժուարութիւններ չը կան։ Ֆրանսիայի կողմից առաջացրած անհամաձայնութիւնների մասին տարածված լուրերը պաշտօնապէս հերքվեցան։ Ֆրանսիական կառավարութիւնը հասկացնելով, որ ինքը չէ ցանկանում առաջաւոր դեր խաղալ Թիւրքիայի վրա գործվելի ճնշման մէջ, միևնոյն ժամանակ յայտնեց, որ ինքը միւս պետութիւններից յետ չի մնայ։ Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի կողմից ընդդիմութիւն չէ երևում, ուրեմն մնում է միայն նաւատորմի հրամանատարութեան հարցը։

Այսպէս թէ այնպէս աշունքին Թիւրքիան նշանաւոր զիջումներ կանի, կամ արևելեան հարցը բոլորովին կը կերպարանափոխվի։

ԱԼԲԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ռագուզայից դարձեալ սպառնացող լուրեր են ստացվում ալբանական միութեան գործունէութեան մասին։ Այդ քաղաքից ստացված հեռագիրը հաղորդում է, որ միրդիտները նորից վերադառնում են Տուզի, որովհետև ալբանական միութիւնը խոստացաւ նրանց հրացաններ և փող տալ։ Սկուտարիի քաղաքային մեչետի մէջ ալբանական ժողովը տեղական նահանգապետին պաշտօնանկ յայտնեց։ Մահմետական ալբանցիները իրանց երկրի համար անկախութիւն են պահանջում։ Ասում են, որ Պոդգորիցայի մօտ ալբանցիների և չերնոգորցիների մէջ նոր կռիւ է պատահել։

Այս լուրերին, նկատում են լրագիրները, պէտք է զգուշութեամբ վերաբերվել մինչև նրանք հաստատվեն աւելի արժանահաւատ աղբիւրներից։ Անցեալ տարվայ փորձը հաստատեց, որ Ռագուզայի մէջ ալբանցիների մասին ամեն բան հնարում են։ Ռագուզայից ստացվեցաւ Ալբանիան անկախ յայտնելու, Մուխթար-փաշայի և Թիւրքաց այլ աստիճանաւորների սպանման մասին սխալ լուրերը։

Կ. Պոլսից ստացված հեռագիրը հաղորդում է, որ Դուլցինիօն Չերնոգորիային յանձնելու համար ուղարկվում է Ալբանիա ոչ թէ զինուորական մինիստր Հուսէյն փաշա, այլ Ռիզա-փաշա, որ միևնոյն ժամանակ Ալբանիայի գլխաւոր նահանգապետ է նշանակվում։ Որքան յայտնի է այդ փոփոխութեան պատճառը եւրոպական պետութիւններն էին, որոնք հասկացրին Բ. Դռանը, որ նա աւելի հեշտութեամբ կը վերջացնի չերնոգորիական հարցը, եթէ այդ յանձնարարութիւնը մի բուն թիւրքի կը տայ, որ առիթ չի ունենայ ալբանցիներին համակրելու։ Ռիզա-փաշան յարմար է այդ պայմանի համար, որովհետև նա գործին բարեխղճաբար կը վերաբերվի։ Ալբանցիները չեն հաւանում այդ կարգադրութիւնը և շտապում են վախեցնել իրանց նոր նահանգապետին միրդիտների վերադարձով։

Աւելի արժանահաւատ աղբիւրներից եկած տեղեկութիւնների համեմատ ալբանական շարժումը այլ ևս վտանգաւոր բնաւորութիւն չունի։ Բ. Դռան համաձայնութիւնը, թէպէտ և պայմանաւոր, զիջել Դուլցինիօ Չերնոգորիային՝ բաւական հանգստացրեց ապստամբներին։ Ապստամբութիւնը պահպանվում է ալբանական միութեան մասնաժողովից, բայց այնքան թուլացած է, որ թիւրքաց զօրքերի երևալուն պէս Դուլցինիօի նահանգի մէջ ալբանցիները կը համոզվեն, որ անհրաժեշտ է հնազանդվել։ Հարկաւոր է, ի հարկէ, որ թիւրքաց զօրքերի հրամանատարը եռանդոտ մարդ լինի։ Եթէ հարցին ուշիմ կերպով նայենք, հեշտ կը լինի նկատել, որ Ռագուզայից ստացված լուրերի նպատակն է վախեցնել Ռիզա-փաշային և ստիպել նրան հրաժարվել իր յանձնարարութենից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Կ. ՊՈԼԻՍ, 12 օգոստոսի։ Դեսպանները հասցրին Բ. Դռանը մի նոր միաձայն գրութիւն յունական խնդրի վերաբերութեամբ։

ՍԻՄԼԱ, 1 օգոստոսի։ Երբ անգլիացիները դուրս եկան Կանդահարից թշնամիների վրա յարձակվելու համար, նրանք կորցրին 8 օֆիցեր և 180 զինուոր սպանվածներ և 5 օֆիցեր վիրաւորված։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 օգոստոսի։ Երէկ Մեծ Իշխան Ալէքսանդր Ալէքսանդրովիչ իր ամուսնու և երեխաների հետ ուղևորվեցաւ արտասահման։ Այսօր կը հասնեն այստեղ հելլենական թագաւորը և թագուհին։ Լեսօվսկի օգոստոսի 8-ին ուղևորվեցաւ Սինգապուր։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ